Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԱՑ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 3. Արարատ– ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025 - 31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2025 -30.09.2025թթ. |
| Ներկայացման օր | 03.10.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խոհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

**Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում** սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 45 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, 1 շահառու ուղեկցվել է հիվանդանոց:
Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
**Ազատ ժամանցի կազմակերպման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 6 խմբակ, որոնց մասնակցել է 45 շահառու:
Կենտրոնում գործող խմբակներն են՝

- Երգ,
- Առողջարար ֆիզկուլտուրա,
- Գրական ակումբ,
- Կինոդարան,
- Հմուտ ձեռքեր,
- Ընթերցանություն:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնում կազմակերպվել է թվով 8 միջոցառում, որին մասնակցել է 45 շահառու: Կազմակերպված միջոցառումներն են՝ Սահմանադրության օր, Սուրբ Աստվածածին վերափոխման տոն, Եռօրյա բակային

ճամբար, Անկախության օր, էքսկուրսիա դեպի Աշտարակ, շահառուների ծննդյան տարեդարձերի նշում (3 անգամ):

- **Աշխատանքային/արտթերապիայի կազմակերպման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում թվով 38 շահառու մասնակցել է հոգեբանի կողմից իրականացված 12 խմբային հանդիպումներին: Խմբային հանդիպումներն իրականացվել են հետևյալ թեմաներով՝ կոգնիտիվ մարզում, շարժողական վարժություններ, նեյրոբիկա: Իրականացվել են տրամաբանական խաղեր՝ մարզելով տարեցների հիշողությունը, կիրառվել են միջկիսագնդային փոխգործակցությունը խթանող տարբեր վարժություններ:
- **Սննդի տրամադրման շրջանակներում** յուրաքանչյուր օր կենտրոնում սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- **Այլ ծառայություններ**
  Հաշվետու ժամանակահատվածում «Լույս հայի աչքերին» ծրագրի շրջանակներում վիրահատվել է 4 շահառու:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ մշակված նյութերը.

- Անկախության օրվա նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/17EDssw8KN/),
- Եռօրյա բակային ճամբար (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/1ABth2kRmc/, https://www.facebook.com/share/p/1BdLwWTgQb/ https://www.facebook.com/share/p/1Er1Yndivj/),
- Սուրբ Աստվածածնի վերափոխման տոն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/172djMSkMY),
- Էքսկուրսիա դեպի Սևան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/1J7Jt23sWe/):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,

- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում Արտաշատի համայնքային կենտրոնի սոցիալական աշխատողները մասնակցել են ՄՍԾ Արարատի և Արտաշատի ՏԿ-ների կողմից կազմակերպված սոցիալական համագործակցության ֆորումներին, որտեղ քննարկվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին աջակցելու մեխանիզմները և մարտահրավերները, համագործակցության ժամանակ ծագած համակարգային խնդիրները:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 42/45 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 34 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 7 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 6 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 7 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 38 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 45 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 38 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 45 |
| 5.1 | Երգ | 27 |
| 5.2 | Ընթերցանության ակումբ | 23 |
| 5.3 | Առողջարար ֆիզկուլտուրա | 17 |
| 5.4 | Կինոդարան | 11 |
| 5.5 | Հմուտ ձեռքեր | 9 |
| 5.6 | Ընթերցանություն | 13 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 45 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 24 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) | |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Միխթարյան* 03.10.2025թ.

(ստորագրություն, անուն,ազգանուն)